Հուսիկ Արա

Կապույտ մեղեդի ջութակի համար

Աշուն: Օրացույցին՝ 19, 21, 25…
Սեպտեմբերյան օրեր են՝ դառն ու աղի:

Մի՛ ընկիր, ոգիս,
իմ թռչուն՝ տրված ի վերուստ.
մենք շրջելու ենք դեռ ջրերի վրա խաղաղ,
ինչպես Աստծու ոգին է շրջել,
և զատելու ենք ջուր ու ցամաք՝
լո՛ւյս, լո՛ւյս որպես և սե՛ր:
Մենք արարելու օրեր ունենք՝
մեկից մինչև յոթ,
և դրախտում ապրելու կյանքեր.
դեռ շուտ է, ոգիս,
թե հանգիստ առնենք:

Ահա, ես էլ եկա
և տեսնում եմ այն,
որ կարդացել էի ծանր գրքերում,
թերթել պատմության փոշոտ էջերին
և խոտորվել խութուխորշում ժամանակների:
Արդ, թույլ չեմ տա ինձ,
որ նորից ձեռքս գրի՝
ցեղասպանություն.

իմ աչքերը գունաթափվել են
բառն այդ կարդալուց:

Թող հնչի հոգիս
թեկուզ անհարմար,
սակայն
կապույտ մեղեդի
ջութակի համար:

Խեթի՛ր կողս, հրեշտակ իմ փափուկ քնի,
մղձավա՞նջ է գուցե սա.
արթնանամ և տեսնեմ նորից,
որ չքնաղ է աշունն այս ու անարատ:

Երկար քայլում են, դանդաղ, խոնված,
աչքերը դատարկ, հոգու մեջ ոչինչ.
նրանք ելել են տնից,
թիկունքում՝ սպանդ,
կրծքին՝ հրազեն,
ու մի ճանապարհ՝
կոկորդին կապած պարանի նման:
Կին ու երեխա, տարեց ու ջահել,
մարդիկ, պարզապես մարդիկ…
Բնիկների արտագաղթն է սա,
տեղահանություն,
որ վարք ունեն շերտ-շերտ
և հիշողություն,
լեռների վրա և այս հողի տակ՝
հազար ու հազար
և էլի հազար տարիների մեջ:

Հիմա շներն են ոռնում այնտեղ՝
լքված տաճարներից ներս՝

պաղ գիշերվա մեջ,
դունչը պարզած Աստծուն՝
լուսնի փոխարեն:

Կանգ մի՛ առ, սիրտ իմ,
խփիր թեկուզ թույլ,
ևս մեկ անգամ ու էլի՛, էլի՛,
գուցե խաղաղվե՞ն մարմին ու հոգի
և գտնեն հաշտվելու
մի աղոտ եզր,
գոնե չժխտող մեկմեկու՝ ինձ և ինձ:

Շուրջս խանութներ,
դուրս եկող կանայք՝ լիքը ձեռքերով.
գոհ են, հայացքը խաղաղ,
և՝ մանուկներ գույնզգույն:
Գարեջուր, չիփսեր ու թղթախաղ
տաղավարներում,
զբոսանք, ժամանց.
զառն է գլորվում նարդու տախտակին՝
գրազ ու փողով,
թե ով է վառելու կրակը խորոված:
Այդպես իջնում են օրերը՝
զվարթ, տոնական,
մեր թափված արյան,
անթաղ զոհերի
և կորցրած երկրի քանդուավերին՝
դեռ տաք տնքացող ու թարմ:

Եվ չգիտեմ,
ինձ այդպես՝ մի սփոփ խոսքով,
փրկո՞ւմ եմ, որ չխելագարվեմ,
թե՞ փրկությունը

խելագարվելն է մինչև վերջ:

Մի՛ ընկիր, հոգիս,
երկինք ունենք մենք,
և թևե՛ր,
որ ծվատ չեն
ու չեն փետրաթափ.
մեր թռիչքը մեր մեջ և մեզնից է վեր:
Մի՛ ծալվեք դեռ, իմ հոգնած ծնկներ,
գնանք քայլ առ քայլ,
անտարակույս.
պահված առավոտ կա մեզ
և ծագող արև: